ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՊԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Կատարող _____Թ. Սայադյան (Թիվ 27 դպրոց)

Ղեկավար _____Ս. Հովսեփյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն .....էջ 2

Գլուխ 1 - Տեղեկություններ կարպետագործության և գորգագործության մասին .....էջ 3

Գլուխ 1.1 - Կարպետի և գորգի տեսակները .....էջ 4

Գլուխ 1.2 - Կարպետագործական զարդանախշեր .....էջ 9

Գլուխ 1.3 - Կարպետագործական գործիքներ և նյութեր .....էջ 11

Գլուխ 1.4 - Կարպետագործության և գորգագործության ներկանյութեր .....էջ 15

Գլուխ 1.5 - Կարպետ գործելու տեխնիկան .....էջ 16

Գլուխ 2 - ԽԻԿ համակարգով օրվա դասի պլան 1 .....էջ 19

Գլուխ 2 - ԽԻԿ համակարգով օրվա դասի պլան 2 .....էջ 22

Եզրակացություն .....էջ 24

Գրականություն .....էջ 25

Ներածություն

Թեման արդիական է

Գաղտնիք չէ, որ երկիրն առաջնահերթ ճանաչվում է իր մշակույթով, իսկ մենք՝ հայերս, ունենալով խորը մշակութային արմատներ ճարտարապետության, մանրանկարչության, գորգարվեստի մեջ, ցավոք, ճակատագրի բերումով չենք կարողացել ըստ պատշաճի պահպանել և շարունակել դարերով փոխանցվող ավանդույթները:

Կարևորելով ազգային արժեքների, ավանդույթների և մշակութային տարրերի հետ հենց դպրոցական տարիքից հաղորդակցվելը՝ այս հետազոտական աշխատանքի միջոցով նպատակ եմ հետապնդել առավել խորն ուսումնասիրել դպրոցական ծրագրով նախատեսված կարպետագործությանն ու գորգագործությանը վերաբերող թեմաներն ու դրանք ՏՀՏ միջոցներով առավել մատչելի և հետաքրքիր եղանակով ներկայացնել:

Նպատակը

Շատ կարևոր է աշակերտների մեջ սեր ներարկել դեպի ազգային մշակույթն ու արհեստները՝ դրանց հարատևությունն ու սերնդե սերունդ փոխանցումն ապահովելու համար: Այս աշխատանքը որպես ձեռանմուշ կարող է օգտագործվել նաև աշակերտների կողմից՝ նման աշխատանքներ կատարելու համար:

Սույն հետազոտական աշխատանքը բաղկացած է մի քանի գլուխներից, որոնցից յուրաքանչյուրով փորձել եմ հնարավորինս մատչելի եղանակով ներկայացնել գորգագործության և կարպետագործության պատմությունը, արմատները, հայկական կարպետների և գորգերի առանձնահատկությունները, տեսակներն ու դրանց համար օգտագործվող նյութերն ու գործիքները, հումքն ու գունանյութերը:

Հետազոտության ընթացքում օգտվել եմ մի քանի տասնյակ բաց աղբյուրներից, ուսումնասիրելով տարբեր մասնագետների ու փորձագետների կարծիքներ, պնդումներ ու վերլուծություններ հայկական կարպետագործության և գորգագործության առանձնահատկությունների, զարդանախշերի և դրանց ծագումնաբանության մասին:

Աշխատանքը հագեցած է համապատասխան վիզուալներով, որոնք տեքստերին զուգահեռ առավել պատկերավոր ու ընկալելի են դարձնում ներկայացվող նյութը:

Տեղեկություններ կարպետագործության և գորգագործության մասին

Կարպետագործությունը և գորգագործությունը հայ ժողովրդի հնագույն ու սիրված արհեստներից են: Դրանք իրենց ուրույն տեղն են գրավել մշակույթի համընդհանուր գանձարանում, մշակվել, պահպանվել ու կատարելության են հասել հայուհիների շնորհքի ու կարողությունների շնորհիվ: Հայերենում գորգ և կարպետ բառերը օգտագործվում են որպես հոմանիշ բառեր՝միայն այն տարբերությամբ, որ գորգերն ունեն թելախավ, իսկ կարպետները՝ոչ:

Կարպետ գործել են և՛ մեծերը, և՛ փոքրերը: Գործել են կիսամութ խրճիթներում և ցուրտ բնակարաններում: Գյուղերում աղջիկները դեռ վաղ հասակից նստել են տորքի առջև, յուրաքանչյուրն իր օժիտի համար գործել է կարպետահյուս խուրջիններ և աղաքսակներ, անկողնապարկ ու տաշտի մեզար, գթալաման և վարագույր: Օժիտը կազմող հյուսվածքները խոսում էին հարսի շնորհքի ու կարողությունների մասին: Այն մեծ տեղ է գրավել հայ ժողովրդի կենցաղում, զարդարել է բնակարաններն ու եկեղեցիները, ցրտից պաշտպանել է մարդկանց և գործածվել որպես հանդերձանք: Կարպետները և գորգերը ծառայել են տարբեր նպատակների և ունեցել են տարբեր անուններ: Մեզարներն օգտագործում էին հաց թխելիս, ջեջիմը ծառայում էր որպես փռոց: Խուրջինը եղել է տարբեր չափսերի:

Կարպետի և գորգի զարդանկարներն իրենց բովանդակությամբ առնչվում են հայկական կիրառական արվեստի այլ ճյուղերի հետ: Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկատել քարե հուշարձանների, խաչքարերի վրա: Կարպետի զարդանկարները նմանություններ ունեն նաև փայտի փորագիր նախշերի հետ: Նույն զարդանախշերը կիրառական արվեստի տարբեր բնագավառներում հանդես են գալիս իրենց բնորոշ տարբերակներով:

Կարպետի և գորգի տեսակները

Կարպետի և գորգի էական տարբերությունը հյուսվածքի տեխնիկայի մեջ է: Գորգի դեպքում ուղղահայաց հենքաթելերի վրա կապվում են հանգույցներ: Խավը ստացվում է հանգույցների ծայրերը խուզելու շնորհիվ: Կարպետները գործվում են տարբեր տեխնիկաներով: Ըստ այդ հատկանիշի նրանք պայմանականորեն բաժանվում են յոթ խմբի՝

1. **Մեզար**
2. **Ջեջիմ**
3. **Երկու երեսանի կարպետ**
4. **Շուլալ կարպետ**
5. **Ուղիղ օղաճիտ**
6. **Փաթաթովի կարպետ**
7. **Թեք օղաճիտ փաթաթովի կարպետ**

1. Մեզարը գործվում է կտավի պես, գործող թելը մեկընդմեջ անցնում է հենքի թելերի միջով, ստացվում է երկու երեսից հարթ, նույնանման գործվածք, ուր երևում են և՛ գործող և՛ հենքի թելերը: Կիրառվում է լավաշի խմորի գնդերը ծածկելու համար:

2. Ջեջիմի ամենաբնորոշ առանձնա-հատկությունը նրա գունավոր-շերտավոր լինելն է: Գործող թելն անցկացնում են հենքով՝ ձախից աջ և աջից ձախ, ապա կտուտով նստեցնում: Ստացվում են ներդաշնակ գունավոր շերտեր:

Ջեջիմը գործում են նաև **խաչաձև, սանրաձև** և այլ նախշերով: Սևանի ավազանում այսպիսի ասացվածք կար՝ «*Մենք յոթ գույնի ջեջիմ կգործեինք*»:

3. Երկու երեսանի (մատնաքաշ) կարպետն ամենակարևոր գործվածքն է, որից և այդ բնագավառը ստացել է իր անվանումը: Կարպետի հենքն արվում էր խավավոր գորգի նման՝ հիմնականում ուղղահայաց տորքի վրա: Սկզբնական շրջանում հենքը **բրդյա** թելերով էր արվում, ավելի ուշ՝ **բամբակյա:** Հենքի թելերի միջով անցնում են հիմնական գործող թելերը, որոնք ամրացնում են կտուտիչով: Կարպետ գործում են երկու եղանակով: **Առաջինն** այն է, երբ գործվածքը սկսում են մի ծայրից և ավարտում կարպետի վերջում: **Երկրորդ** եղանակով նախշերը գործում են կարպետի համապատասխան մասերում, որից հետո ազատ տարածությունը՝ տափը, լցնում են միագույն թելերով: Երկու դեպքերում էլ թելերն ամրացննում են եզրերին, իսկ հետ գալիս ամրացնում են տվյալ կետի հենքի թելի վրա: Դրա շնորհիվ առաջանում են փոքրիկ անցքեր (փոխ, թոռակ, չաթ), որոնք նույնպես ներգրավվում են կարպետի ընդհանուր հարդարանքի մեջ:

4. Շուլալ - կարպետի նախշերը գորգի նման արվում են փափուկ թելերով: Անվանումը գալիս է գործելու տեխնիկայից: Գործող նախշը ձևավորվում է հորիզոնական գծերով, հենքի միջով անցնում է շուլալ կարի պես ծածկում է հենքի մի քանի թելը, ապա անցնում կարպետի տակի կողմը, որոշ տարածությունից հետո նորից դուրս է գալիս կարպետի երեսը, դարձյալ վերցնում են մի քանի թել և անցնում տակի կողմը: Կարպետի տակի կողմից երևում է նախշի բացասական ձևը: Նախշ ձևավորելիս գործող թելի ծայրերը կարպետի հետևի կողմում թողնում են կախված: Ավարտելուց հետո տակից կապում են կարի հանգույցով: Շուլալ կարպետի և՛ նախշերը, և՛ տափը (դաշտը) միասին են գործվում, շարք շարքի հետևից:

5. Ուղիղ օղաճիտ փաթաթովի կարպետում գործող գունավոր թելը փաթաթվում է հենքի մեկ կամ երկու թելի շուրջը, օղակաձև **«ճիտ է անում»**, փաթաթվում, անցնում աջ, ապա պտտվում հենքի հաջորդ մեկ կամ երկու թելերի շուրջը և այսպես մինչև շարքի վերջը: Շարքն ավարտելուց հետո անցնում է միջնաթելը և ամուր կտուտվում-ամրացվում: Հենքի թելը և միջնաթելերը չեն երևում, թաքնվում են գործվածքի մեջ այս տեխնիկայով գործվածքի դեպքում գործող թելն ուղիղ գծով է տեղադրվում, իսկ երբ հաջորդ շարքում վրայից նույն գույնի թել է անցնում, ստացվում են մանր քառակուսիներ: Դիտողին թվում է, թե ուղիղ համրովի հարթակար ասեղնագործություն է: Գործվածքի հետևում գործող թելը թեք-թեք է նստում: Օղաճիտ փաթաթովի կարպետները մի երեսանի են, հաստ, խիտ են գործված և բարձր են գնահատվում:

6. Թեք օղաճիտ փաթաթովի կարպետն ուղիղ օղաճիտ կարպետի պես բարդ գործվածք է: Այս տեսակում ևս գործող գունավոր թելը պատ է տալիս, ճիտ անում հենքի մեկ կամ երկու թելին, միայն թե ուղիղ օղաճիտից տարբերվում է օղակների տարբեր դասավորությամբ, այստեղ գործող թելը թեք-թեք է դասավորվում:

Բարակ, ոլորած, ամուր միջնաթելը (ինչպես գորգերում) ամրացնում է շարքերը, և ինքը չի երևում: Թեք օղաճիտ փաթաթովի կարպետները մեկ երեսանի են:

Այս տեխնիկայով են գործվում հայկական հռչակավոր օձակարպետները:

7. Ծոպավոր (ծոպերես) կարպետը հյուսման տեխնիկայով մոտենում է գորգին: Նրա մակերեսին տեղ-տեղ շերտերով գորգի հանգույցներ են կապում և երեսի կողմում ծայրերը կտրած թողնում: Գոյանում են գորգի նման խավով նախշեր:

Գորգագործությունը Հայաստանում զարգացել է երկու ուղղությամբ՝ արհեստանոցներում, ուր աշխատել են հմուտ մասնագետ վարպետներ և գործել են թանկարժեք գորգեր, և ժողովրդական լայն խավերի շրջաններում, տներում, տնայնագործ կանանց ու տղամարդկանց ձեռքով: Հայաստանում գորգագործությունը՝ իբրև արհեստ զարգացած է եղել դեռևս վաղնջական ժամանակներից: Այս մասին են վկայում Արենի 1 քարայրում գտնված գործվածքները, մ. թ. ա. 5-րդ դարին թվագրվող Պազիրիկ գորգը, ինչպես նաև հայկական գորգարվեստի մասին մի շարք պատմաբանների կողմից պահպանված հիշատակություններ: Պազիրիկ գորգը հայտնաբերվել է 1949 թ. Լեռնային Ալթայի Պազիրիկ կուրգանի թիվ 5 դամբարանից: Գորգը շուրջ 2500 տարի մնացել է սառած դամբարանում ու այդպիսով, զերծ մնալով արտաքին որևէ ազդեցությունից, հասել մինչ մեր ժամանակները: Գորգն աչքի է ընկնում գեղազարդման հարուստ համակարգով, գունային երանգների բազմազանությամբ և ամբողջական պատկերացում է տալիս 2500 տարի առաջ եղած գորգագործական տեխնոլոգիայի մասին:

Հայկական գորգերը բազմատեսակ հորինվածքներ ունեն, որոնց մեջ ավելի շատ են մեդալիոնները՝գաթա, կրկենի, բաղարջ, երկրաչափական, բուսական, կենդանական, թռչնային մոտիվները: Թե գորգի կենտրոնական մակերեսին, թե շրջանակի մեջ պահպանվել են կենաց ծառը, ծաղիկը, արևը, օձ վիշապը՝ տարբեր պատկերավորումներով:

Միջնադարը համարվում է հայկական գորգագործության ոսկեդարը, քանի որ հենց այս ժամանակաշրջանում են սկսում ի հայտ գալ հայկական գորգի որոշակի ոճային առանձնահատկությունները: Պահպանվել են վաղ միջնադարյան հայկական գորգերի փոքր պատառիկներ, որոնք գտնվել են հայկական մատյանների կազմերում՝ վերականգնման ժամանակ: Դրանց ձևերի և ոճերի մեջ հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալները.

1. արծվագորգ

2. օձագորգ

3. վիշապագորգ

Կարպետագործական զարդանախշեր

Հայկական կարպետագործության մեջ մեծ խումբ են կազմում **վիշապակարպետները**, որոնք շատ ավելի հայտնի են **օձակարպետ** անվամբ: Դրանք գործվում են թեք-օղաճիտ-փաթաթովի տեխնիկայով: Հայկական խորհրդանիշներից են **Տ** և **Ե** ձևերը: Տ-աձև խորհրդանշանը հայկական Տեր բառի առաջին տառն է , որը նշանակում է **Աստված Ամենակարող:** Ե-աձևը հայերեն Յիսուս բառի առաջին տառն է, և նշանակում է Հիսուս: Այս նշանները ունեն չարխափան նշանակություն, քանի որ մեկնությունն ու նշանակությունը սերտորեն կապված են հայկական այբուբենի իմացության հետ, միայն հայերն են օգտագործել այս խորհրդանիշները:

Նկար 1, Թռչնաբուն, Սիսյան, Վարանդա

Հայտնի է նաև, որ **թռչնի** պատկերը կապել են երկնային երևույթների, գարնան, արևի, բարու հետ:

Կարպետի ևս մի տարածված սիմվոլ՝ **նշազարդը**, որը պղաբերության ամենատարածված ոճավորումն է ինչպես տարազի, այնպես էլ գորգերի մեջ:

Կարևոր և շատ հանդիպող մեկ այլ զարդանախշ է **կենաց ծառը,** որի ամենաոճավորված տարբերակներին հանդիպում ենք հայկական զարդարվեստում, որը պտղաբերության, աճի գաղափարի խորհուրդն ունի:

Իսկ **խաչը** դիտարկվում է որպես արևի սիմվոլ, չորս տարրերի՝ բնության չորս ուժերի գաղափար, որը և դրված է քրիստոնեության հիմքում: Հնագույն խաչանախշը մեզ է հասել և՛ առանձին պատկերով և՛ շրջանակի մեջ, որը հավանաբար հենց երկրագնդի պատկերներն է հանդիսանում: Ուշագրավ են արծվի, առյուծի, եղջերուի, օձի, վիշապաօձի, հրեշների պատկերները: Հայկական գորգերի և կարպետների կոմպոզիցիաներում երբեմն կրկնվում են հայ մանրանկարչությանը բնորոշ սյուժետային գծեր: Դրանք կապված են բնության զարթոնքի, գարնանամուտի, ծիսական արարողությունների հետ:

Կարպետագործության նյութերն ու գործիքները

Կարպետագործության համար, որպես նյութ է հանդիսացել թե՛ կենդանական՝ **բուրդ, մետաքս**, և թե՛ բուսական՝ **բամբակ, վուշ,** ծագում ունեցող հումքը: Հայկական լեռնաշխարհում կային կարպետագործու-թյան զարգացման համար անհրաժեշտ բոլոր նպաս-տավոր պայմանները՝ **բուրդը, բամբակը, վուշը, մետաքսը,** դրանք մշակելու և օգտագործելու կուլտուրան:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում կարպետագործների և գորգագործների հիմնական աշխատանքային գործիքներն են՝ **տորքը** (դազգահ), **մկրատը, կտուտիչ, դանակը և փոքր սանրը, թակը,** իսկ հումքի վերամշակման համար՝ **սանդերքը**, **ճախարակը և իլիկը:**

Կտուտիչը /կոթիչ, հովա, քարկիթ/՝ շարքերը նստեցնելու, կտուտելու բազմատամ գործիք է: Կարճ ու կորավուն կոթով բռնակ և ատամնաշարով ավարտվող հարվածող մաս /գլուխ/ ունեցող գործիք է, որի հարվածող մասը լինում է պայտաձև: Այն լինում է փայտից, մետաղից, ոսկորից: Գործիքի կոթից բռնելով՝ գործողը խփում է, նստեցնում գործվածքի շարքերը:

Դանակը գործվող թելը հանգուցելու և կտրելու գործիք է: Այն կազմված է շեղբից և կոթից: Շեղբը մետաղից է, միասայր՝ ծայրը եռանկյունաձև կտրվածքով: Կոթը լինում է փայտից կամ մետաղից: Գործող թելը դանակի օգնությամբ հենքաթելեր արանքով անցկացնելով՝ կտրում են թելի ավելացած մասը:

Թակը բուրդ ծեծելու և լվանալու հարմարանք է: 70-80 սմ երկարությամբ, 10-12սմ լայնությամբ և 4-5 սմ հաստությամբ կորավուն փայտ է: Մի ծայրը բարակեցված է, գլանաձև՝ բռնելու համար: Բուրդը փռում են սալ-քարին, վրան ջուր լցնում և թակով խփում մինչև մաքվելը:

Սանդերքը բուրդը գզել-սանրելու գործիք է: Այն բաղկացած է փայտե հարթակից, որին ամրացված է 2 նմանատիպ տախտակ՝ կազմելով եռանկյուն բուրգ: Դրանց գագաթները ամրացվում են ուղղահայաց, հավասար ու սրածայր պողպատե ճաղով, որոնցով ստացվում է սանրաձև 2 ճաղաշար: Գործիքի փայտե գագաթն ունենում է մետաղյա ամրագոտի:

Սանդերքով գզած բուրդն ավելի մաքուր է: Սանդերքով գզելուց հետո ստացված բուրդը կոչվում է **մալանչ, փաթիլ:** Գզելուն ու սանրելուն հաջորդում էին մանումն ու ոլորումը: Գզած բուրդը մանում էին ճախարակով կամ իլիկով:

Իլիկը /թեշիկ, քարմա/՝ թել մանելու և ոլորելու գործիք է: Հումքը մանել-ոլորելու կամ թելը ոլորելու համար մանողը դրա ծայրն ամրացնում է կեռիկից, մի ձեռքով պահում բարակեցված թելահումքի կամ թելի հատվածը, մյուս ձեռքի մատներով կամ ազդրի և ձեռքի ափի շփումով պտտեցնում է իլիկը, ոլորում մյուս ձեռքի ափում բռնած հատվածը և մանած թելը փաթաթում իլիկի ձողին՝ մինչև մալանչի ավարտը:

Ճախարակը թելահումքը մանելու և ոլորելու կամ թելը ոլորելու կատարելագործված հարմարանք է: Այն կազմված է փայտե պատվանդան-հիմքից, որի միծայրին՝ զույգ հենաթևերի վերնամասի անցքերում, տեղադրված է առանցքաձողով թափանիվը: Թելահումքի մալանչի ծայրը բարակեցվում և կապվում է իլիկից:

Թափանիվը աջ ձեռքով պտտելով՝ կատարվում է մալանչի մանումը՝ մինչև թելը անհրաժեշտ հաստության հասցնելը՝ ձախ ձեռքով պահելով այն պտտվող իլիկի ուղղությամբ: Մանված-ոլորված թելի դիրքն իլիկի հանդեպ փոխելով՝փաթաթում են այն, որով ստացվում է ոստ:

Կարպետների մեջ նախշերը բամբակյա թելով են գործում այն դեպքում, երբ ցանկանում են սպիտակ նախշերը երկար ժամանակ վառ պահել: Բուրդը ժամանակի ընթացքում մի փոքր դեղնում է՝ ընդունելով փղոսկրի գույն: Բամբակը չի փոխում իր գույնը, երանգը, այդ պատճառով էլ օժիտի կարպետագործ իրերի մեջ մասամբ օգտագործվել է բամբակյա թել:

Վերջին ժամանակներում կարպետի, նաև գորգի հենքը հինում են բամբակյա թելով: Հին կարպետները, որոնց և՛ հենքը և՛ զարդանախշերը բրդյա թելերով են արված, ավելի փափուկ ու ճկուն են, քան բամբակահենք կարպետները: Կարպետագործության մեջ օգտագործվում է երկու տեսակի

թել՝ **հենքի թել և գործող թել** (երկտակ, երեքտակ): Երկուսն էլ լավ ոլորված են:

Միայն կարպետի մի տեսակում, որը շուլալ է կոչվում, նախշերը գորգի նման գործում են փափուկ թելով, մեկտակ (հին գորգերի խավի թելը երկտակ է):

Կարպետագործության և գորգագործության ներկանյութեր

Կարպետագործության թելերը ներկում էին բուսական, կենդանական և հանքային ներկերով: Կենդանական ներկերից ամենակարևորը **որդան կարմիրն** է, որը դեռևս 5-րդ դարի հայ մատենագիրների վկայությամբ մեծ հռչակ էր վայելում և արտահանվում էր երկրից դուրս: Որդան կարմիրը ստացվում է Արարատյան դաշտում բույսերի և նրանց արմատների վրա ապրող կարմրագույն միջատից:

Սակայն բնակչության մեջ ամենագործածականը բուսական ներկանյութերն են, որոնք մեծաթիվ են և բազմազան: Նայած տարվա եղանակին՝ օգտագործվում են բույսի արմատը, ցողունը, կեղևը, տերևները, ծաղիկը և պտուղները: Ամենաարժեքավոր բույսը, որը ոչ միայն Հայաստանում է օգտագործվում, այլև արտահանվում է՝ տորոնն է:

Կարպետ գործելու տեխնիկան

Ծանոթանանք կարպետ հյուսելու ընթացքին, որը շատ պարզ է: Այս տեխնիկայով յուրաքանչյուր աշակերտ կարող է հյուսել գեղեցիկ, նախշազարդ, տարբեր չափերի կարպետներ, պայուսակներ, դրամաքսակներ, ակնոցամաններ, նախշազարդ գոտիներ: Հյուսելու համար անհրաժեշտ է քառակուսի կամ ուղղանկյուն փայտե շրջանակ 10×15-ից մինչև 80×100 սմ չափերի:

Հինելու համար վերցնել ուղղանկյուն կամ քառակուսի շրջանակ, գամել: Թելի ծայրը կապել շրջանակի որևէ կողմի առաջին գամին, ապա գամի շուրջը փաթաթել ձախից աջ և նորից վերադառնալ շրջանակի նախկին կողմը, ապա երկրորդ գամին և այդպես շարունակել մինչև վերջ: Հենքաթելերն ամուր անցկացնելուց հետո պետք է վերցնել որևէ ամուր, հարթ, ուղղանկյուն առարկա, օրինակ քանոն, և մեկընդմեջ անցկացնել հենքի թելերի միջով:

Մինչև վերջ անցկացնելուց հետո փայտն անհրաժեշտ է իջեցնել ներքև, մինչև հպվի շրջանակի փայտին, ապա հյուսել կարպետի հավասարացնող

շղթան (բերանը), եզրը (1,5-2սմ) միջնաթելային հյուսվածքով:

Ասեղը թելել և անցկացնել հենքի թելերի տակից և վրայով մեկընդմեջ, ու նստեցնել սանրով: Նույն ձևով գործել մինչև վերջին հենքաթելը: Վերադարձին կատարել հակադարձ գործողությունը՝ թելած ասեղ անցկացնել հենքի թելերի վրայից ու տակից: Հյուսքի թելով գործել մինչև վերջ, հաջորդ թելը, որպեսզի ամուր լինի և չքանդվի, պետք է սկսել

3-4 հենքի թելի խորքից, այսինքն՝ ավարտվող և սկսվող թելերը նստում են իրար վրա:

Ըստ նախապես ընտրված զարդանախշի, ընտրում ենք թելերի գույներն այնպես, որ արտահայտվեն նախշի բոլոր առանձնահատկությունները: Ընտրում ենք ֆոնի գույն և գույներ՝ զարդանախշի համար այնպես, որ համահունչ լինեն մեկը մյուսի հետ (հիմնականում մուգ կապույտ, կարմիր, դեղնավուն, բաց դարչնագույն): Ընտրած գունավոր թելը անցկացնում ենք հենքի թելերով մեկումեջ, գործիքով (պատառաքաղով,սանրով), նստեցնում, հետո հաջորդ շարքի համար նույն թելը անցկացնում ենք հակառակ մեկումեջերով և դարձյալ պատարաքաղով նստեցնում:

Կարպետի համար էսքիզը նպատակահարմար է նկարել վանդակավոր թղթի վրա՝ յուրաքանչյուր վանդակում նկարելով կա՛մ պայմանական նշան կա՛մ արդեն նախապես որոշված գույն: Էսքիզը թղթին նկարելուց հետո հաշվում ենք վանդակների քանակը՝ յուրաքանչյուր վանդակի համար նախատեսելով որոշակի քանակությամբ թելեր (օր.՝ 1 վանդակը =3 կամ 4 թելի): Ի դեպ 2 թելից պակաս չենք կարող նախատեսել: Հաշվում ենք համապատասխան թելերի քանակն ըստ էսքիզի վանդակների և տեղադրում հինած շրջանակի վրա: Անպայման անհրաժեշտ է նախապես հաշվել, գտնել և ֆիքսել հինած թելերի մեջտեղը. Նախշը հարմար է տեղադրել և սկսել գործել մեջտեղից:

Երբ արդեն կարպետը պատրաստ է, հենքի թելով գործել 5 շարք՝ հավասարեցնող շղթան՝ բերանը, ինչպես սկզբից և շրջանակի երկու կողմերի գամերից կտրել հենքաթելերը, հանել կարպետը և հենքաթելերի ծայրերը զույգ-զույգ կապել իրար: Կապելուց հետո մկրատով հավասարեցնել, այսինքն վերջնամշակել:

Մեկ այլ կարևոր խնդիր է գորգի, կարպետի և կարպետագործ իրերի լվացումը՝դրանք կարող են՝ գունաթափվել, գույները խառնվել կամ խամրել: Պետք է լվանալ նախապես փորձնական ստուգում անցկացնելով: Նախ պետք է զննել և որոշել, թե գործող թելերից որոնք են ներկված բնական և որոնք արհեստական ներկանյութերով, քանի որ բնական ներկանյութերը բավական կայուն են ջրի նկատմամբ, իսկ արհեստականները՝ ոչ:

Օրվա դասի պլան 1

Դասարան - 7-րդ

Դասի թեմա - Գորգագործություն և կարպետագործություն

Դասի տիպը - Նոր նյութի հաղորդում

Դասի տևողությունը - 45ր.

Նպատակը

Հաղորդել գիտելիքներ կարպետագործության տեսակների մասին, ծանոթացնել կարպետ գործելու համար անհրաժեշտ նյութերին, գործիքներին, հարմարանքներին և ներկանյութերին, կարպետի զարդանախշերի տեսակներին:

Վերջնարդյունք

Կիմանա կարպետագործության և գորգագործության, կարպետի և նրա նախշերի մասին, անհրաժեշտ նյութերի, գործիքների, սարքավորումների և ներկանյութերի անունները, կիրառման եղանակները:

Խնդիրները

Ուսուցանող - աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել իմանալու գորգագործության և կարպետագործության պատմության մասին:

Զարգացնող - աշակերտների մոտ ձևավորել վերլուծելու, հորինելու, նոր գաղափարներ մտածելու, ստեղծագործական աշխատանքների կատարման ունակություններ և հմտություններ, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները՝ ձևավորել կարպետ հյուսելու կարողություններ, զարգացնել ինքնուրույն և խմբերով աշխատելու կարողություններ:

Դաստիարակող - աշխատանքի կատարման ընթացքում ճշտապահության և կարգապահության ձևավորում: Աշխատանքից առաջ և հետո աշխատատեղի կազմակերպման կարողությունների ձևավորում:

<u>Մեթոդներ</u> - մտագրոհ, բացատրություն, ցուցադրություն:

<u>Միջառարկայական կապ</u> - պատմություն, երկրաչափություն, կերպարվեստ, հայոց լեզու:

<u>Դասի կահավորանքը</u> - դասագիրք, աշակերտների ձեռքով գործված կարպետների տեսակներ:

<u>Դասի ընթացքը</u>

1. **կազմակերպչական մաս**- հաճախումների ստուգում, աշխատանքային պարագաների ստուգում: *(2ր.)*
2. **նախորդ նյութի ստուգում և ամփոփում:** *(3ր.)*
3. **խթանում** - մտագրոհի միջոցով պարզել աշակերտների առկա գիտելիքները գորգագործության և կարպետագործության տեսակների, նախշերի, նյութերի և գործիքների մասին: Ստանալով տարբեր պատասխաններ, ընդհանրացնել՝ ցուցադրելով կարպետահյուս աշխատանքներ և այլ կիրառական իրեր, երեխաների ուշադրությունը հրավիրել դրանց նշանակությանը, զարդանախշերին, օգտագործված թելերի տեսակներին և գույներին: *(5ր.)*
4. **իմաստի ընկալում** - Դասարանը բաժանել 4 խմբի: *(25ր.)*

1-ին խումբը ընթերցի և մեկնաբանի, /ուսուցչի օգնությամբ/,որ կարպետը և գորգը իրենցից ներկայացնում են բրդյա կամ բամբակյա հաստ գործվածք, միայն մի տարբերությամբ, որ գորգերն ունեն թելախավ, իսկ կարպետները՝ ոչ, և նրանք մեծ դեր են ունեցել հայ ժողովրդի կյանքում, խորհրդանշելով՝ հայ մարդու ապրելակերպի բարեկեցությունը:

2-րդ խումբը ծանոթանա և ներկայացնի /ուսուցչի օգնությամբ/ կարպետի տեսակները՝ ըստ գործելու եղանակի, որոնք բաժանվում են 7 խմբի՝ **մեզար, ջեջիմ, մատնաքաշ, երկու երեսանի մատնաքաշ, շուլալ, ուղիղ օղաճիտ փաթաթովի, թեք օղաճիտ փաթաթովի և ծոպերես**:

3-րդ խումբը ծանոթանա և ներկայացնի /ուսուցչի օգնությամբ/ բուրդ մշակելու և կարպետ գործելու գործիքները:

1. **Թակը** - բուրդ ծեծելու և լվանալու հարմարանք է :
2. **Սանդերքը** - բուրդ գզել - սանրելու գործիք է:
3. **Իլիկը** - թել մանելու և ոլորելու գործիք է:
4. **Ճախարակը** - թել մանելու և ոլորելու հարմարանք է:

1. **Տորք** - գորգ և կարպետ գործելու դազգահ:
2. **Կտուտիչ** - շարքերը նստեցնելու բազմատամ գործիք է:
3. **Դանակ** - գործող թելը հանգուցելու և կտրելու գործիք է:
4. **Մկրատը** - գործված գորգը խուզելու և հավասարեցնելու գործիք է:

4-րդ խումբը ընթերցի և ներկայացնի /ուսուցչի օգնությամբ/ թելերը ներկելու բնական միջոցների անունները: Դրանք են՝որդան կարմիրը, տորոնի արմատները, նռան կեղևը, անթառամ ծաղիկը, ընկույզի կեղևը, գինեքարը և այլն:

5. կշռադատում - Այս փուլում խմբերը հարցեր են ուղղում մեկը մյուսին, լսում են պատասխանները, ապա գրանցում են աշխատանքային տետրում: Դասի վերջում ամփոփում են դասը՝ ինչ գիտեիք, ինչ սովորեցինք: Վերջում գնահատում միմյանց: *(10ր.)*

Օրվա դասի պլան 2

Դասարան - 7-րդ
Դասի թեման - Կարպետ հինել
Դասի տիպը - գործնական
Դասի տևողությունը - 45ր.

Նպատակը

Իմանան հինել կարպետ, հենքաթելերը ամրացնել շրջանակի վրա, կատարել հենքաթելերի բաժանում, կարողանա հյուսել հավասարեցնող շղթա, միջնաթելերի անցկացում, կարպետի հյուսում ըստ էսքիզի և կատարել վերջնամշակում:

Վերջնարդյունք

Կկարողանա հենքաթելերը ամրացնել շրջանակի վրա և կատարել հենքաթելերի բաժանում,կկարողանա հյուսել հավասարեցնող շղթան և միջնաթելերի անցկացում,կկարողանա կարպետը հյուսել ըստ էսքիզի և վերջնամշակել:

Խնդիրները

Ուսուցանող - Աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել սովորել կարպետ հյուսել, սովորեցնել հենքաթելերի վրա կարպետ հյուսելու պարզագույն տեխնիկան:

Զարգացնող - Աշակերտների մոտ ձևավորել հորինելու,նոր գաղափարներ, մտածելու, ստեղծագործական աշխատանքների կատարման ունակություններ և հմտություններ:

Պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները՝ ձևավորել կարպետ հյուսելու կարողություններ, զարգացնել ինքնուրույն և խմբերով աշխատելու կարողություններ, զարգացնել տարածական պատկերացումներ:

Դաստիարակող - աշխատանքի կատարման ընթացքում ճշտապահության և կարգապահության ձևավորում: Աշխատանքից առաջ և աշխատանքից հետո աշխատատեղի կազմակերպման կարողությունների ձևավորում:

Դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ:

<u>Մեթոդներ</u> - գործնական աշխատանք, ցուցադրություն:

<u>Միջառարկայական կապ</u> - երկրաչափություն, կերպարվես:

<u>Դասի կահավորանքը</u> - դասագիրք, աշակերտների ձեռքով գործված

կարպետների տեսակներ, փայտից շրջանակ, գործելու թելեր, մկրատ, երկար ասեղ, քանոն և կտուտիչ:

<u>Դասի ընթացքը</u>

1. **Կազմակերպչական մաս** - Հաճախումների ստուգում, աշխատանքային

պարագաների ստուգում: *(2ր.)*

2. **Խթանում** - Մտագրոհի միջոցով պարզել աշակերտների գիտելիքներն օրվա թեմայի վերաբերյալ: *(3ր.)*

3. **Իմաստի ընկալում -** Սովորեցնել կարպետ հինելու համար ընտրել համապատասխան թելը և բամբակյա ոլորած թելով հինել շրջանակը, կատարել հենքաթելերի բաժանում քանոնի միջոցով, սովորեցնել հյուսել հավասարեցնող շղթան, ապա անցկացնել գործող թելը և հյուսել կարպետ: Ավարտելուց հետո ստուգել հյուսքի որակը, կատարել համապատասխան ուղղումներ, հետո միայն կտրել հենքաթելերը և զույգ-զույգ կապել: Բացատրել, որ աշխատանքային գործիքներից պետք է օգտվել շատ զգույշ, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները: Աշխատելիս պետք է լինել ուշադիր և կոկիկ: Աշխատանքն ավարտելուց հետո պետք է հավաքել, մաքրել աշխատատեղը: *(25ր.)*

4. **Կշռադատում** - Այս փուլում աշակերտները աշխատում են ինքնուրույն, հարցերի դեպքում դիմում ուսուցչի օգնությանը, օգնում մեկը մյուսին, աշխատում են ուշադիր և կոկիկ, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները: Աշխատանքն ավարտելուց հետո ստուգում են հյուսքի որակը, կատարում որոշակի ուղղումներ, ապա կտրում են շրջանակի վրայի հենքաթելերը և զույգ-զույգ կապում: Վերջում կարգի են բերում աշխատատեղը և գնահատվում: *(10ր.)*

Եզրակացություն

Որպես եզրակացություն ևս մեկ անգամ ուզում եմ շեշտել ու կարևորել գորգագործության և կարպետագործության դասավանդումը դպրոցում, դրան հատկացվող դասաժամերը առավել հետաքրքիր ու ինֆորմատիվ դարձնելը, որպեսզի երեխաները սիրեն ու գնահատեն մեր ազգային մշակույթը, արվեստն ու արհեստները, դառնան դրանց կրողները և փոխանցողները հաջորդ սերունդներին:

Աշխատանքի ընթացքում ևս մեկ անգամ եկել եմ այն համոզման, որ նյութի ճիշտ և հետաքրքիր մատուցումը կարող է մի քանի անգամ բարձրացնել սովորողների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրվածությունն ու սերը: Շատ կարևոր է, որ երեխաները ևս նման հետազոտական աշխատանքներ կատարեն՝ իմանալով նոր փաստեր ու ճանաչելով իրենք իրենց, որպես հայկականության կրողների:

Շնորհակալություն առաջադրանքի համար:

Գրականություն

1. Ս. Հովսեփյան «Ուսուցչի ձեռնարկ 5-7 րդ դասարանների համար » - Երևան, Տիգրան Մեծ, 2014թ.

2. Ս. Հովսեփյան «Տեխնոլոգիա » 7-րդ դասարան - Երևան, Տիգրան Մեծ, 2014թ.

3. Կ. Պապիկյան «Հայկական կարպետներ և գորգեր » - Երևան, Զանգակ-97, 2007թ.

4. Ժ. Ավետիսյան «Տեխնոլոգիա 5-7-րդ դասարանների ուսուցչի մեթոդական ձեռնարկ » - Երևան, Աստղիկ գրատուն, 2014թ.

5. https://ru.wikipedia.org/wiki

6. https://mariamaghababyan.wordpress.com

7. https://znanio.ru/media/